ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

3 մարտի 2025թ. թիվ 205

Մ.ԽԵՉՈՒՄՅԱՆԻՆ, Ս.ԽԱՌԱՏՅԱՆԻՆ ԵՎ
Լ.ՔՈՉԱՐՅԱՆԻՆ ՓԱՄԲԱԿ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերով, հիմք ընդունելով Լոռու մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Մհեր Խեչումյանին, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ Սամվել Խառատյանին և տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության ավագ մասնագետ Լիլիթ Քոչարյանին ս/թ մարտի 5-ին մեկ օրով գործուղել Փամբակ՝ համայնքապետարանում թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթներին որպես հանձնաժողովի անդամներ մասնակցելու համար:

2. Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը:

3. Գործուղման ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ «Mulberry» համակարգով ներկայացնել հաշվետվություն՝ ըստ սահմանված կարգի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

03/03/2025

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

2025թ. մարտի 3
ք.Վանաձոր